



Պաշտոնը: Սոցիալական պատասխանատվության մասնագետ

Աշխատանքի վայրը: Ք. Երևան

Աշխատանքի նկարագիր:

Ապահովել ՄԵՖ Ինտերնեյշնլ-ի (ՄԵՖ) Սոցիալական պատասխանատվության (ՄՊ) քաղաքականության, ենթահամակարգերի, ընթացակարգերի և հրահանգների իրագործումը: Աջակցել կազմակերպության ղեկավարներին կազմակերպության սոցիալական առաքելության իրականացման գործում՝ առաջնորդելով այն և կրելով պատասխանատվություն ՄԵՖ-ի շուկայի ուսումնասիրությունների և կազմակերպության գործառնությունների սոցիալական ազդեցությունը հաճախորդների ընտանիքների, համայնքների, հասարակայնության և շրջակա միջավայրի վրա ուսումնասիրելու համար:

Աշխատանքային պարտականություններ:

- Շարունակաբար ուսումնասիրելով ՄՊ ոլորտի միջազգային լավագույն փորձը, ստանդարտները և ՀՀ օրենսդրական պահանջները՝ ներկայացնել առաջարկներ ՄԵՖ-ի համակարգերի կատարելագործման և/կամ արդիականացման ուղղությամբ,
- Պատրաստել և ներկայացնել ՄՊ ոլորտի հետ կապված ներքին և արտաքին հաշվետվություններ, վերլուծություններ, այլ տեղեկատվություն,
- Աջակցել ՄԵՖ-ի աշխատակիցների ուսուցմանը ՄՊ ոլորտի թեմաներով,
- Համայնքների ներգրավում և զարգացում՝ ՄԵՖ-ի բարեգործական, հատկապես երեխաների համար, ծրագրերի կազմակերպում, օր.՝ կրթական, մշակութային, բնապահպանական և այլ սոցիալական ծրագրեր,
- Առանցքային դեր խաղալ սոցիալական ներգործության կառավարման համակարգի նախագծման/վերանախագծման գործում՝ օգտագործելով միջազգային լավագույն փորձը,
- Անցկացնել և կոորդինացնել սոցիալական ներգործության ընթացիկ վերահսկումը, կոորդինացնել տվյալների հավաքագրումը, իրականացնել տվյալների ստուգում և վերլուծություն,
- Ապահովել ՄԵՖ-ի շուկայի ուսումնասիրությունները և կազմակերպության գործառնությունների սոցիալական ազդեցությունը հաճախորդների ընտանիքների վրա,

Պահանջվող մասնագիտական գիտելիքները և աշխատանքային պարտականությունները

- Բարձրագույն կրթություն
- Անգլերեն լեզվի իմացություն,
- MS Office ծրագրային փաթեթի լավ հմտություններ (Word, Excel)
- Փաստաթղթերի հետ աշխատելու կարողություն
- Գործնական շփման էթիկա
- Հաճախորդների և կազմակերպության աշխատակիցների հետ շփում հաստատելու և արդյունավետ համագործակցելու կարողություն
- Ստատիստիկ վերլուծության հմտություններ
- AS Bank համակարգի իմացությունը առավելություն է

Դիմելու կարգը

Ցանկացողները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները cvsro@sef.am էլեկտրոնային հասցեին:

Խնդրում ենք նամակում նշել ինչ պաշտոնի համար եք դիմում՝ Սոցիալական պատասխանատվության մասնագետ:

Ինքնակենսագրությունների ընդունման վերջնաժամկետն է **31.07.2017թ.:**